

**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ ԱԶԳԻՍ ՎԵՀԱՓԱՌ ՀՅԱՅՐԱՊԵՏԻ
ՏՆՈՐԷՆՈՒԹԻՒՆԵՐԻՑ**

Դիւանի գրութիւն Մայր Աթոռի միաբան Տ. Բենիկ վարդապետի անունով, որով իւր զրաւոր խնդրի համաձայն, Նորին Սրբութիւնը թոյլատրեց 1913/14 ուսումնարում ևս ուսուցչութիւն անել Տփխիսի Գ. Գիմնազիոնում: 9 ապրիլի. թ. 552:

Նորին Սրբութեան մակազրութեամբ պատուիրուեց Մայր Տաճարի լուսարարապետին ս. Միւռոն շնորհել Եւղոկիոյ Հայոց թեմի համար: 18 ապրիլի. թ. 569:

Դիւանի գրութեամբ յանձնուեց Մայր Աթոռի մատենադարանապետին Տ. Սուքիաս արքեպիսկոպոսի միջոցով ուղարկած Յարութիւն Գ. Մրմբեանի երկու զրչագիր տետրները: 18 ապրիլ. թ. 573:

Դիւանի գրութիւն ս. Էջմիածնի Սինօդի անդամ Տ. Բարդէն վարդապետի անունով, որով թոյլատրուեց, մինչև առաջիկայ մայիսի վերջը, Ղարաբաղի թեմի ժամանակաւոր կառավարիչ Տ. Զաւէն վարդապետի հետ գնալ հանդանակութեան յօդուտ նուշուայ թեմական դպրանոցի: 19 ապրիլի. թ. 585:

Նորին Վեհափառութեան մակազրութեամբ ուղարկուեց ս. Էջմիածնի Սինօդին Աստրախանցի պ. Յովհաննէս Դրիգորեան Ստեփանեանցի դպրոցական ֆօնդի օդտին նուիրաբերած մի հարիւր յիսուն ըուբլին: 19 ապրիլի. թ. 590:

Դիւանի գրութիւններով, Նորին Սրբութեան հրամանով, յանձնարարուեց Ռուսաստանի բոլոր թեմակալ առաջնորդներին այսուհետեւ մանրամասն զեկուցում ներկայացնել Նորին Սրբութեան, թէ դպրոցական ֆօնդի օդտին հանդանակուող գումարի մասին և թէ առհասարակ ինչպէս է ընթանում այդ գործը: 19 ապրիլի. թ. 594—599.

Դիւանի գրութեամբ յանձնաբարուեց Ախալցիսայի փոխանորդ Տ. Խստչակ վարդապետին յայտնել Ախալցիսացի այլի Արքուհի Աղաջանեանին նորին Վեհափառութեան հետեւեալ օրհնութիւնը. «Յայտնում ենք Մեր զոհունակութիւնն ու Հայրապետական օրհնութիւնն այլի Արքուհի Աղաջանեանցին և նորա Սուրէն, Վահրամ և Խոչատուր որդիներին, որոնք յարդելով հանգուցեալ Վահան Խաչատրեան Աղաջանեանի յիշատակը. նուիրել են վեց հարիւր բուրլի Ախալցիսայի գպրոցական և բարենպատակ հաստատութիւններին և երկու հարիւր բուրլի և յօգուտ Մայր Աթոռի գպրոցական ֆօնդի: Թող Աստուած միսիթարէ հանգուցեալի վշտացեալ այլի կնոջ, զաւակների և ազգականների սրտերը և Տէրը լուսաւորէ հանգուցելոյ հոգին»: 21 ապրիլի. թ. 656:

Խոնդակ Մայր Աթոռի միաբան Տ. Աշոտ Եպիսկոպոսի անունով, որով առաջադրուեց ձեռնազրել կուսակրօն քհնյ. և արեղայ Դարաբաղի Հայոց թեմական գպրանոցի ուսուցիչ ճեմարանաւարտ Բիւզանդ Թորոսեանին, Ամարասի վանքի միաբան, և ձեռնազրութեան վկայականը ներկայացնել ս. Էջմիածնի Սինօդին վաւերացնելու համար: 23 ապրիլի. թ. 660:

Խոնդակ ս. Էջմիածնի Սինօդի անունով, որով առաջադրուեց նորընծայ Սուրէն արեղայ Թորոսեանին ուղարկել Ամարասի վանք՝ և յայտնել Դարաբաղի ժամանակաւոր կառավարիչ Տ. Զաւեն վարդապետին: 26 ապրիլի. թ. 674:

Դիւանի գրութեամբ յանձնաբարուեց Ամերիկայի Հայոց կենդրոնական վարչութեան՝ արդելել Մամբրէ քահանայ Բէլթէկեանին Հայոց եկեղեցիներում քահանայագործութիւնն անել, որովհետեւ ընկած է ամբաստանութիւնների տակ և յայտնի է որպես զեղծարար: 10 ապրիլի. թ. 555:

Դիւանի գրութեամբ Հաստատուեց «Արարատ» ամսագրի խմբագրութեան հետեւեալ որոշումը. — ինքնուրոյն գրուածքների համար՝ 10 աստիճանի տառով առ տռաւելն երեսը մեկ բուրլի, իսկ 12 աստիճանի տառով՝ 80 կոպ.:

թարգմանական յօդուածների համար՝ 10 աստիճանի տառապ երեսը 60 կուլ., իսկ 12 աստիճանի՝ 45 կուլ.: 10 ապրիլի. թ. 557:

Դիւանի զրութեամբ յանձնարարուեց Պարսկա-Հընդկաստանի առաջնրդական խորհրդարանին՝ բացատրութիւն պահանջել Խորէն վարդապետից, որ Գիւլբանդ Սարդարեանի տանից վերցրել է մի ձեռագիր աւետարան և մինչև օրս ոչ վերադրել է և ոչ էլ յանձնել ո. Ամենափրկիչ վանքի մատենադարանին: 10 ապրիլ. թ. 560.

ՍԻՆՈԴԻ ՕՐԱԿՐԵԵՐԻՑ ՔԱՂԱԿԱԾՆԵՐ

Սինոդը քննութեան առնելով իւր եղբակացու թեան ուղարկած զեպարտամենտի փետր. 11-ին թ. 1500 զրութիւնը և յարակից թղթերը Ա. Պետերբուրգի և Մոսկայի հայ հոգևորականների ոռնկի առիթով, գտնում է, որ եկեղեցիների ընդհանուր կառավարութիւնը պատկանում է եկեղեցու խորհրդին (X1 հատ. I մ. յօդ. 1237, հրատ. 1896), որտեղ քննուում ու կազմում է իւրաքանչիւր եկող տարուայ համար նախահաշիւ: Հոգաբարձուն առանձին մասնակցութիւն չունի եկեղեցական զոյքերի կառավարութեան գործում: Իսամասնակցում է միայն որպէս նախագահ խորհրդի: Էւ առհասարակ Հոգաբարձուն հանդիսանում է որպէս խորհրդիներկայացուցիչ պետ. հաստատութիւնների և այլ անձանց մօտ: Խորհրդի կազմած նախահաշիւը կարող է գործադրուել միմիայն թեմակալ Առաջնորդի կողմից հաստատուելուց յետոյ: Եկեղեցական կալուածների և առհասարակ եկեղեցական տնտեսութեան և վարչութեան (յուրաքանչիւր) հետ կապուած բոլոր գործերը, որոնց թւում և նախահաշիւը, իրանց վերջնական լուծումն են ստանում: Երբ մշակուում կազմում են խորհրդի կողմից և հաստատուում թեմական Առաջնորդից: Առանց այս երկու ինստանցիան անցնելու եկեղեցու տնտեսութեան և վարչութեան հետ կապուած ոչ մի գործ չէ կարող ծագել